№ 138 ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 28 **1902** ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 28 № 138

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղի 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԿԷՍ ՏԱՐՎԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«ՄՇԱԿԻ» վեց ամսվայ գինն է, յուլիսի 1-ից մինչեւ տարվայ վերջը, վեց ռուբլի, մէկ ամսվանը—մէկ ռուբլի։ Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն կէս տարվայ համար 3 դոլար։ Եւրոպայի բաժանորդները—16 ֆրանկ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Իրաւաբանների մասնակցութեամբ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատենագրութիւն. Նամակ Շուշուց. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Նամակ Թուրքեստանից։

ԻՐԱՒԱԲԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Ինչպէս յայտնի է, հոգեւոր իշխանութիւնը քննութիւն էր նշանակել Գօրու հոգեւոր կառավարութեան գործերի վրա։ Քննութիւնը վերջացաւ, բայց յուզված մտքերը չը հանգստացան և վրդովված դրութիւնը շարունակվում է։ Քննութեան կատարումը յարուցեց իր դէմ բողոքներ և դժգոհութիւն։ Անբաւական են ժողովրդի մեծագոյն մասը, երէցփոխները և քահանաների մի մասը, որոնք համարում են քննութիւնը կատարված թերի և սխալ եղանակով։

Քննութիւնը կարօտ է վերաքննութեան, իրերի, փաստերի, նոր ուսումնասիրութեան և վկաների ցուցումների վերստուգութեան։ Բնորոշ է, որ քննութիւնը, փոխանակ մարդկանց քաջալերելու և դանդատներին բնական ելք տալու, ճնշող ազդեցութիւն է գործել և բողոքողները մնացել են այն համոզման մէջ, որ նրանց բողոքը չէ լսված, նրանց դանդատը ուշադրութեան չէ առնված և նրանց արդար դատը անկարող կը լինի պաշտպանութիւն գտնել հոգեւոր իշխանութեան կողմից։

Անկասկած՝ իւրաքանչիւր քննութիւնից և դատավարութիւնից կը մնան դժգոհ և անբաւական անձինք։ Շատ սակաւ դէպքերում են երկու կողմն էլ մնում գոհ և բաւական։ Սակայն հարցը գոհ և դժգոհ մնալու մէջը չէ, այլ այն բանի, թէ որքան բարեխիղճ է կատարված քննութիւնը և արդեօք արդարութեան պահանջը պաշտպանված է այդ քննութեան գործողութեամբ։ Մենք մեր ձեռքին չունենք Գօրու քննութեան բոլոր նիւթերը և չենք կարող նրան քննադատել կէտ առ կէտ. բայց տեսնելով, որ քննութիւնը յարուցել է իր դէմ բողոքներ թէ ժողովրդի և թէ երէցփոխների ու քահանաների շրջաններում, կարծում ենք, որ հոգեւոր իշխանութիւնը պէտք է նշանակէ վերաքննութիւն և այդ գործը կատարելու համար հրաւիրէ օգնութեան իրաւաբաններից մէկին, որպէս զի քննութեան բոլոր գործողութիւնները կատարվեն ամեն օրինաւորութեամբ և իրաւաբանական փորձառութեամբ։ Իրաւաբանների մասնակցութիւնը կը նպաստէ քննութիւնների հեղինակաւորութեան և կը ցրվէ կասկածները։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

„Цѣмрэрների սարգ“ Պոլսեցների կրեցուլը, Ծիզգեոնոլը ո. ոմզդաՇՅՈՐԼՈՒ ՄՈՐԻ. «Կեանքի Հայելի» պիէսների ժողովածու, երկրորդ գիրք, պատկերազարդ. հրատարակութիւն Ց. Իմէդաչվիլիի, գինն է 1 ռուբլի։

Սրանից երկու տարի առաջ, այն է 1899 թ-ին, պ. Իմէդաչվիլին հրատարակեց «Կեանքի Հայելի»-ի առաջին գիրքը, որի մասին խօսվեց այն ժամանակ «Մշակ»-ի մէջ։ Այժմ մեր առաջ դրած է «Կեանքի Հայելի»-ի երկրորդ գիրքը։

Ինչպէս երեւում է առաջաբանից, հրատարակիչը գտել է մեծ համակրանք հասարակութեան կողմից իր առաջին գրքոյկի համար. համոզվել է, որ հարկաւոր է տպած պիէսների տարածելը եւ որ «Կեանքի Հայելի»-ն նպաստում է ժողովրդական ներկայացումներին։ Սրանով խրախուսված, այժմ հրատարակում է երկրորդ գիրքը։ Թէեւ համոզված է, որ նիւթապէս աշխատանքը չի գնահատվի, բայց եւ այնպէս չէ տրտնջում, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ այս հրատարակութիւնն էլ կը նպաստէ վրաց բեմի բարգաւաճմանը...

Սա մի գովելի գործ է եւ յատուկ է միայն վրացուն, հայ մարդը առանց նիւթական օգտի այսպիսի բան չի սկսի։

Առաջին գիրքը այն անյարմարութիւնն ունէր, որ նրա մէջ մտել էին այնպիսի ծանր եւ լուրջ պիէսներ, որոնք տեխնիկական դժուարութիւնների պատճառով մատչելի չեն ժողովրդական թատրոններին, քանի որ ժողովածուն նշանակված էր ժողովրդի համար։ Երեւի այս բանից դրդված, հրատարակիչը, գրքի նպատակը թողնելով, լայնացրել է ծրագիրը։

Ներկայ գրքի մէջ տպել է եւ այնպիսի կլասիքական պիէս, ինչպէս Գուցկօվի «Ուրիէլ Ակոստա»-ն է, ի նկատի ունենալով ոչ միայն ժողովրդական թատրոնները, այլ եւ մեծ քաղաքների բեմերը. բացի դրանից, հրատարակչի ասելով, պէտք է բաւականութիւն տայ թատրոնից դուրս եւ ընթերցասէր հասարակութեանը, սակայն կը հասնի իր նպատակին թէ ոչ, ցոյց կը տայ ապագան եւ այդ պատճառով էլ նա դիմում է համակրող հասարակութեանը, խնդրելով օգնել ինչով որ կարող են։

Գրքի առաջաբանը ապացոյց է այն բանի, որ վրաց հասարակութիւնը ընթերցասէր է եւ անտարբեր չէ դէպի իրա հրատարակիչները։ Խրախուսվելով իր առաջին հրատարակութիւնից, որ արժէր 60 կ., հրատարակիչը լոյս է հանում երկրորդը, նշանակելով գինը 1 ռուբլի, եւ յոյս ունի հրատարակել նոյնպէս երրորդ գիրքը, թէեւ, իր ասելով, ոչ մի նիւթական օգուտ չէ սպասում երկրորդ հրատարակութիւնից...

Այս գիրքը հրատարակված է մեծ խնամքով եւ լաւ թղթի վրա, զարդարված է դրամատուրգների եւ դերասանների պատկերներով, որոնց կցած են եւ կենսագրութիւնները։ Ժողովածուն պարունակում է իր մէջ եօթը պիէս. արժանաւորութեան կողմից առաջին տեղը բռնում է Գուցկօվի «Ուրիէլ Ակոստա» ողբերգութիւնը, որ գեղեցիկ թարգմանել է Ց. Բաքրաձէն ազատ ոտանաւորով. կայ նոյնպէս նոր հրապարակ եկած հայ հեղինակ օր. Դօնդարեանի (Ագեան) «Փող եւ Ծագում» կօմեդիան, որի մասին խօսել է «Մշակը» 1899 թ-ին։

Այս գրքի մէջ կը գտնէք նաեւ մեր տաղանդաւոր Գ. Սունդուկեանցի «Օսկան Պետրովիչը էն կինքումը» կօմեդիան, թարգմանութեամբ հանգուցեալ Դաւիթ Տէր-Դաւթեանցի. առաջին անգամն է կօմեդիան լոյս տեսնում վրացերէն. մնացած չորսն էլ մի մի գործողութեամբ պիէսներ են, որոնց լեզուն, ինչպէս եւ վերոյիշեալներինը, մատչելի է եւ թեթեւ։

Գրքի մէջ կան բեմի վրա կարդալու համար ոտանաւորներ, կուպլէտներ, տեսարաններ, որոնք այնքան էլ աջող չեն։ Կարելի էր աւելի լաւ ընտրութիւն անել. գրքին կցած է նաեւ Շիլլերից թարգմանած յօդուածը թատրոնի նշանակութեան մասին, բաւական ծանր լեզուով, եւ մի յօդուած դրամատիքական գեղարուեստ-քով չազատեն, նա մնում է մինչեւ մահը։

Ես երկար չը կարողացայ մնալ բանտարկեալների շրջանում, ոյժ չունէի նայել նրանց վրա։ Թէպէտ շատ անգամ տեսած էի Ռուսաստանի բանտերը, բայց Բուխարայի «Զնդանը» անմոռանալի է ինձ համար... Նա տարաւ յիշողութիւնս հեռու, շատ հեռու, Թիւրքիայի մթին ու խոնաւ բանտերը...

Ես արդէն փախչում էի, երբ ինձ համարեա ուժով տարան բանտի մի ուրիշ բաժանմունքը, ուր նստած էր մի պատանի հրէայ, հազիւ 18 տարեկան. նա 7 ամիս նստած էր բանտում եւ բոլորովին անմեղ։ Պատմութիւնը կարճ է։ Մեծ եղբայրը մնանկ էր յայտարարել իրան, եւ որպէս զի ինքը կարողանայ արդարանալ իշխանութեան առաջ, յայտնել էր, որ իր մնանկանալու պատճառը փոքր եղբայրն է։ Իբրեւ թէ այդ եղբայրը իր բացակայութեան ժամանակ վատնել է կարողութեան մի մասը եւ գործերը խանգարել։ Երեւակայական յանցաւորը բանտարկվում է եւ արդէն 7 ամիս նստած էր, երբ մենք տեսանք նրան։ Մենք յոյն յայտնեցինք, որ նա շուտով կազատվի, քանի որ անմեղ էր, իսկ նա գլուխը շարժելով պատասխանեց. «Երբ եղբայրս իր պարտքերը լիովին վճարէ, ես կազատվեմ, այլապէս ոչ»։ Ահա ձեզ արեւելեան արդարադատութեան կատարելատիպը։ Անմեղը նստած է, իսկ մեղաւորը ազատ է։ Անմեղի ազատվելը կախված է իսկական մեղաւորի կամքից։

Քանի որ խօսքը երկու հրէաների մասին է, ես այստեղ կը պատմեմ մի աւանդութիւն, որ կայ Բուխարայի հրէաների մէջ եւ որը կապված է վերեւում յիշված «Մահապարտների մինարէթի» հետ։

Բուխարայի հրէաները Թուրքեստանում չափազանց հին ժողովուրդ են։ Ոմանք ենթադրում են, որ սրանք մնացորդ են այն հրէայ գերիների, որոնք բերված են այստեղ դեռ ասորի եւ պարսիկ բռնակալների ու Իսրայէլի եւ Հրէաստանի թագաւորութիւնների մէջ եղած պատերազմներից յետոյ, ուրեմն մի քանի հարիւր տարի Քրիստոսից առաջ։ Բուխարայում հրէաները, ինչպէս եւ ամեն տեղ, հալածված ժողովուրդ են։ Միայն այստեղ այդ հալածանքը աւելի է աչքի ընկնում։ Հրէան իրաւունք չունի այստեղ կառքով ման գալ, ձի նստել, այլ պէտք է ամեն տեղ ոտքով ման գայ։ Նա իրաւունք չունի մաքուր հագնվել եւ պէտք է միշտ իր վերեւի հագուստի վրայով կապէ մի հասարակ թոկի կտոր ի նշան ստրկութեան։ Երեւակայեցէք ինչ է զգում հրէան, երբ Ռուսաստանում միլիոնների առեւտուր է անում, շքեղ հագնվում, իսկ վերադառնալիս ստիպված է Բուխարայի դռների մօտ շորերը փոխել եւ թոկի կտորը կապելով մէջքից ոտքով տուն գնալ։ Բուխարայից եւ Եւրոպայից եկած հրէաների մէջ մեծ տարբերութիւն կայ։ Նոյն իսկ այնքան մեծ է տարբերութիւնը, որ բնիկ հրէաները նորեկների հետ յարաբերութեան մէջ չեն մտնում եւ ուղղակի խորշում են նրանցից։ Վերջին տարիները միայն սիօնիզմի ազդեցութեան տակ՝ հին հրէաները սկսել են իրանց համար ռաբբիներ Եւրոպայից բերել տալ։ Հին հրէաները «Թալմուդ»-ը չեն ընդունում՝ առարկելով, որ այդ մեկնիչի մասին նրանք տեղեկութիւն չունեն։ Նրանք, հետեւելով հին Մովսիսական օրէնքին, ընդունում են բազմակնութիւն եւ եկուոր հրէաներին մեղադրում են այդ օրէնքից շեղվելու համար։ Ահա միակնութեան եւ բազմակնութեան մասին է կազմվել մի աւանդութիւն, որ եւ կապվել է

տին վերաբերեալ, կազմած պ. Աբաշիձէի ձեռքով։

Գրքի վերջումը տպած են թատրոնական գործիչների—այն է դրամատուրգների եւ դերասանների կենսագրութիւնները, որոնց մէջ գտնում ենք մեր հայ գործիչներից երկուսի կենսագրութիւնը, այն է Գաբրիէլ Սունդուկեանցի եւ Գեղէոն Միրաղեանցի, որոնց վրա մենք մի փոքր կանգ կառնենք։

Ահա թէ ինչ է գրված մեր տաղանդաւոր ալեզարդ դրամատուրգի մասին։

«Գ. Սունդուկեանցը հայ լաւագոյն գրողներից մէկն է. սա համարվում է հայկական կոմեդիայի ստեղծող եւ իզուր չէ, որ սրան յատկացնում են այս տիտղոսը, որովհետեւ մինչեւ սրա երեւալը թէեւ կային պիեսներ, բայց նրանց մէջ չէր նկարագրված իսկական կեանքը։ Միայն Գ. Սունդուկեանցի երեւան գալովը գրականական ասպարէզի վրա՝ հայկական թատերագրութեան համար սկսվեց նոր շրջան»։

«Գ. Սունդուկեանցը այն ժամանակվայ զաւակ է, երբ հասարակութեան մի մասը ձեռք էր բերում լուսաւորութիւն, իսկ միւս մասը, փաթաթված հին քուրքերի մէջ, ձգտում էր դէպի դռնափակ, սահմանափակ կեանքը եւ այս ժամանակակից իրերի դրութիւնը, որը այնքան լաւ էր ուսումնասիրած, ճշդութեամբ նկարեց իր կոմեդիաների մէջ»։

Այնուհետեւ նկարագրում է իւրաքանչիւր պիեսի մէջ դուրս բերած հասարակական հոսանքը, հերոսներին եւ վերջը աւելացնում է թէ՝ հայերը եւ վրացիները այնպէս են իրար հետ կապված եւ երկու ազգերի կենցաղավարութիւնը այնքան է իրար նման, որ Գ. Սունդուկեանի կոմեդիաները շօշափում են եւ վրաց հասարակական հարցերը։ Գ. Սունդուկեանցը մեծ ծառայութիւն է մատուցել երկու հարեւան բեմերին եւ այդ պատճառով էլ պէտք է համարվի երկու հարեւան ազգերի գրող։

Մեծ համակրանքով է խօսում նաեւ դերասան Գեղէոն Միրաղեանցի մասին, որը կրում է Գեղեվանով կեղծ անունը։ Նախ բերում է սրա մանրամասն կենսագրութիւնը մինչեւ հայ բեմից վրաց բեմ հրաւիրելը եւ ապա թէ ինչպէս է դիմաւորել վրաց մամուլը 14 տարի առաջ նրա երեւան գալուն։

«Մեր խմբի բաղդը ժպտաց, գրում է 1889 թ-ին «Թատրոն» շաբաթաթերթը իր № 37-ի մէջ, պ. Գեղեվանովի խելօք խաղը, գեղեցիկ շարժմունքը, միմիկան, խօսքի եւ նախադասութեան գեղեցիկ արտասանելը յիշեցնում են ձեզ լաւագոյն օտար դերասաններին». իսկ նոյն թ-ի «Իվերիան» իր № 233-ի մէջ երկար խօսելով, վերջացնում է՝ «Դերասանի համար մեծ արժանաւորութիւն է, երբ սա պիեսի մէջ դուրս բերած տիպը մարմնացնում է»։

Այնուհետեւ հրատարակիչը, հիմնվելով բէցէնզիաների վրա, շարունակում է այսպէս՝ «Գեղեվանով միատեսակ լաւ է խաղում թէ դրամաների, թէ կոմեդիաների եւ թէ վոդեվիլների մէջ. նա մեր խմբի պարտաճանաչ անդամներից մէկն է եւ երեւելի կերպով է կատարում իր ստանձնած պաշտօնը եւ այդ պատճառով էլ մամուլը եւ հասարակութիւնը մեծ համակրանքով եւ պատուով են վերաբերվում նրան. չնորհիւ իր բեմական տաղանդի զարգացման եւ սիրոյն դէպի բեմը, նա կարողացաւ անցկացնել վրաց բեմի վրա իր ակօսը եւ այդ պատճառով էլ նա համարվում է խմբի մէջ լաւագոյն դերասաններից մէկը. եւ այս խօսքերը հաստատելու համար՝ բերում է, ի միջի այլոց, 1897 թ-ի № 404 «Ցնօբիս փուրցելի» լրագրի կարծիքը, որը գրում է՝ «Սկզբից մինչեւ այսօր պ. Գեղեվանով վրաց բեմի վրա բռնած ունի առանձին դիրք եւ ի պատիւ նրա՝ համարվում է խմբի մէջ օրինակելի դերասան, իբր զարգացած, խելացի, ջանասէր եւ տաղանդաւոր դերասան»։

Պ. հրատարակիչը մատնանիշ է անում պ. Միրաղեանցի վրա նաեւ ինչպէս «Մշակի» աշխատակցի 1897 թ-ից, երբեմն «Մուրճի» եւ թարգմանիչ պիէսների, սրան լաւագոյն օրինակ է համարում վրաց երիտասարդութեան համար, որը նուիրել է իր կեանքը ուսումնարանին, թատրոնին, գրականութեանը եւ հաստատում է իր ասածները 1898 թ. № 66 «Իվերիայի» խօսքերով՝ «Օգտաւէտ է մեր երիտասարդ դերասանների համար դիտել պ. Գեղեվանովի խաղը, նմանվել ամեն բանի մէջ, իւրացնել նրա չկոլան. այս աշխատանքը օգուտ կը բերէ, սրա ապացոյցը ինքը պ. Գեղեվանովն է։»

Վերջացնելով խօսքը հրատարակիչը ասում է՝ «Գ. Սունդուկեանցը եւ Գ. Միրաղեանցը, ազգութեամբ լինելով հայ, օգտաւէտ են եղել եւ են ինչպէս իրանց մայրենի, նաեւ վրաց բեմի համար. թատրոնից դուրս «ընդհարում ունեցած» հայ-վրացիներս, ինչպէս ասում են, թատրոնի միջոցով մի հոգի դարձանք. հարկաւոր էր միմեանց գրականութեան հետ ծանօթանալ, ուսումնասիրել»։

«Այս վսեմ եւ սուրբ տաճարի մէջ, որը չունի հայրենիք, մենք հայ-վրացիներս միանում ենք, բարեկամանում ենք եւ սիրով ծառայում. կարելի է ցայ այնպիսի ժամանակ, երբ երկու ազգութիւններն էլ, ինչպէս թատրոնում, նաեւ ուրիշ գործերի մէջ եղբայրաբար միանանք... ես կարծում եմ այս բանը կը կարողանան անել գրականութիւնը եւ թատրոնը»։

***

—

Նոր ստացված գրքեր.—1) Բժ. Վահան Արծրունի—«Դողերոցք կամ Մալարիա» (Բժշկի Զրոյցներ, № 5), 31 երես, նկարներով, գինը 5 կոպէկ։ 2) «Էմինեան Ազգագրական ժողովածու. հատոր գ.—Թուրքերէնէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ, գրեց Հր. Աճառեան, Մոսկվա—Վաղարշապատ, 1902, 38 եր., գինը 1 ռուբ. 50 կոպէկ. 3) Բ. Պոտտո—„Первые добровольцы Карабага въ эпоху водворенія русскаго владычества (Меликъ Вани и Акопъ—Юзбаши Атабековы), Тиф., 77 стр., цѣна 60 коп. 4) И. Кондадѣвъ „Очерки Закавказской Жизни“. томъ первый. С. П. Б., 1902, стр. 280, цѣна 2 руб.

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

Յունիսի 22-ին

Բենիկ Վարեապետը մի տարի թեմական առաջնորդին հրաւիրատակ ծառայելուց յետոյ, վերջն սկսել է նրա դէմ խօսել։

Գառնակերեան եպիսկոպոսը, որ վաղուց ծանօթ էր Բենիկի բնաւորութեան հետ, չէր ցանկանում, որ նա լինէր տեսուչ այն դպրոցում. ուր ինքն առաջնորդ պիտի լինի եւ դրա համար դեռ էջմիածին եղած ժամանակ, հեռագրեց հոգաբարձուներին, որ առանց իրան տեսչի ընտրութիւնը չը կատարեն. իսկ մինչեւ այդ հեռագիր ստանալը՝ հոգաբարձուները, Կարապետ վարդապետի առաջարկութեամբ, ընտրել էին Բենիկին. մէկ էլ ինչպէս եղաւ, որ սրբազանը փոխեց իր մտադրութիւնը, մնաց գաղտնիք...

Սրբազանի եւ տեսչի յարաբերութիւնը նորից լարվելուց յետոյ, հասարակութիւնը յոյս չունի, որ առաջիկայ ուսումնական տարում Բենիկ վարդապետը կարողանայ որ եւ է արդիւնաւոր գործ կատարել, ինչպէս եւ չէ կատարել նախորդ երկու տարիներում։ Հոգաբարձուներից մի քանիսը թէեւ թունդ պաշտպանում են տեսչին, բայց նրանց բռնած դիրքն էլ սկսել է հասարակութեան զայրոյթ տանել։ Հասարակութիւնը սկսել է ծուռ աչքով նայել հոգաբարձուների վրա, որովհետեւ այդ մարդիկ չարդարացրին իրանց ընտրողների յոյսը եւ դպրոցի շահերը զոհեցին միայն իրանց կուսակցութեան մարդուն պաշտպանելու նպատակին։

Բանն այնտեղ հասաւ, որ հոգաբարձուների կասսան դատարկվեց, սկսեցին մտածել գիւղերի եկեղեցիների վրա 25-ական ռուբլի հարկ նշանակել, որպէս զի կարողանան անպէտք ուսուցիչների ռոճիկները տալ, բայց այդ միտքը չաջողվեց։

Նուիրատուների թիւն էլ զգալի կերպով պակասել է։ Մարդիկ տեսել են, որ դպրոցին նուիրած գումարները նպատակին չեն գործադրվել, սկսել են սառչել դպրոցից. օրինակ, մէկ անձնաւորութիւն փոքր գումար է նուիրում դպրոցին, որպէս զի այդ գումարի միմիայն տոկոսը որոշ նպատակի գործադրեն։ Մեր հոգաբարձուները, չը լսելով կտակատարին, վերցրել են ուղղակի բոլոր գումարը գործադրել. եւ այդ տեսակ օրինակներ շատ են պատահել։

Հոգաբարձուների մասին խօսողների թիւը աւելի շատացաւ, երբ «Մշակում» կարդացին նրանց գրած հերքումը։ Շատերն են զարմացել, թէ ինչպէս են մեր հոգաբարձուները համարձակվել մեր թեմական դպրոցը համեմատել Թիֆլիսի եւ Նոր-Նախիջեւանի դպրոցների հետ. թէ որքան ճիշդ են նրանց բերած փաստերը, մենք թողնում ենք «Մշակի» թղթակցի պատասխանատուութեան, բայց չենք կարող չասել մեր համարձակ հոգաբարձուներին, որ Ներսիսեան եւ Նոր-Նախիջեւանի դպրոցների ուսուցչական խմբի մէջ մտնում են 8—10 մասնագէտ համալսարանականներ, իսկ ովքեր են եւ որտեղ են սովորել մեր թեմական դպրոցի երեւելի «մանկավարժները». Բենիկի խմբի մէջ, բացի մի երկու մասնագէտ համալսարանականից, ոչ ոք չը կայ, մնացածը բոլորը Բենիկ վարդապետի «առ ոտա» սովորածներն են, որոնք դպրոցի անտէրութեան չնորհիւ ստանում են 800—1000 ռուբլի։

Հոգաբարձուների գլխաւորը քաղաքագլուխն է. շատ հաւանական է, եթէ գրենք թէ Շուշին կեղտոտ է, ճանապարհներով անցնել չէ լինում, թատրոնի փողոցով, Թուրքի բազար գնալիս, առանց քիթը բռնելու ու ոտը-ձեռը կոտրելու այդ փողոցներով անցնել չի լինի եւ այլն, նա վեր կենայ հերքում գրէ, թէ ոչ Շուշին ամենամաքուր քաղաքն է, ամեն օր փողոցները սրբվում են, քաղաքը օրէցօր առաջ է գնում, քան թէ Թիֆլիսն ու Նոր-Նախիջեւանը։ Միթէ դա անբարեխղճութիւն չէր լինի...

Ամարանոց եկողների թիւը այս տարի քիչ է, եկածներն էլ փոշմանել են քաղաքի կեղտոտութիւնն ու անյարմարութիւնները տեսնելով։ Հոգաբարձու—քաղաքագլուխը, փոխանակ հերքումի տակ ստորագրելու, ամենամեծ բարութիւն արած կը լինի, եթէ քաղաքը բարեկարգէ, որպէս զի կարողանայ գոնէ տարվայ երեք ամիսը քաղաքացիներին Շուշի գրաւել եւ ոչ թէ քաղաքում եղածներն էլ թողնեն փախչեն։

Ռ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Նոր-Նախիջեւան, յունիսի 20-ին

Ռափայէլ Պատկանեանի երկերի Ш-րդ հատորը հրատարակելու համար կազմված յանձնաժողովը սրանով պատիւ ունի յայտնել ի գիտութիւն, որ ինքն արդէն ձեռնարկել է հաւաքելու հանգուցեալ բանաստեղծի անտիպ աշխատութիւնները՝ թէ արձակ եւ թէ չափածոյ, ուստի եւ յարգոյաբար խնդրում է, որ նրանք, որոնց մօտ գտնվում են հանգուցեալի անտիպ գրուածքները, բարեհաճեն իրանց մօտ եղած նիւթերը յանձնաժողովի տրամադրութեանը ուղարկել մինչեւ առաջիկայ սեպտեմբեր ամիսը։ Ստացված նիւթերը՝ այստեղ ընդօրինակվելուց յետոյ՝ անմիջապէս յետ կուղարկվեն իրանց տէրերին միանգամայն անթերի եւ անկորուստ։

Բացի անտիպ գրուածքներից՝ հրատարակվելիք հատորի մէջ պիտի մտնեն նաեւ Ռ. Պատկանեանի այն վաստակները, որոնք չեն մտել առաջին երկու հատորների մէջ, այլ զանազան ժամանակներում տպված են պէսպէս պարբերական թերթերում։

Ինչպէս տեսանելի է, մեր յանձնաժողովը ամենայն ջանքերով աշխատում է ամենայն ճշտութեամբ եւ ամենայն կանոնաւորութեամբ։ Ինչպէս ասացինք

...ական հրատարակութիւնների մէջ, ինչպէս՝ «Մեղու Հայաստանի», «Ծառաքաղ», «Հիւսիսափայլ», «Կռունկ», «Միածին», «Փորձ», «Արձագանք», «Նոր-Դար», «Մշակ», «Հանդէս Գրականական» եւ այլն հեռաւեալ կեղծ անուններով— Աշուղ Կարապետ, Միքայէլ Վայելչեան, Սիւլիւկ, Խաչի, Պիզ, Պալթայ, Ախտամերկեան եւ այլն։

Ցանձնաժողովս անչափ չնորհակալ կը լինէր, եթէ ձեռնտաս անձինք՝ գործի կատարելութեան համար՝ բարեհաճէին տեղեկութիւն տալ, թէ վերոյիշեալ հանդէսների մէջ, բացի «Փորձից», «Արձագանքից» եւ «Հանդէս Գրականից», յակապէս ինչ գրուածքներ ունի հանդուցեալը (մատնացոյց անել հանդիսի տարեթիւն ու №-ը)։

Ցանձնաժողովս խոնարհաբար խնդրում է մեր միւս պարբերական հրատարակութիւններին արտատպել ոյն նամակը։

ի դիմաց յանձնաժողովի՝ Ե. Շահադիզ

Հասցէ—Нахичевань на Дону, Ерванду Шахъ-Азизу.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը միջնորդութիւն է յարուցել կառավարութեան առաջ՝ բանալու Թիֆլիսի Հալլաբար Թաղում միջնակարգ ուղղաբարեան մեքենայագիտական-տեխնիկական ուսումնարան, որտեղ մասնագիտօրէն ուսումնասիրվէր հանքագործութիւն։ Այս միջնորդութիւնը կովկասեան գլխաւոր իշխանութեան կողմից ուղարկված է ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան։

—

«Кавказъ» լրագիրը հաղորդում է, թէ Թիֆլիսի հասարակական վարչութեան միջնորդութիւնը, որով կառավարութիւնից խնդրվում էր բանալ Թիֆլիսում պոլիտեխնիկում՝ հանքագործական եւ գիւղատնտեսական բաժանմունքներով, նոյնպէս եւ թոյլ տալ նուիրատուութիւններ ժողովել պոլիտեխնիկումի շինութեան կառուցման եւ նրա պահպանութեան համար, երկրագործութեան եւ ներքին գործերի մինիստրութիւնների կողմից մերժված է։

—

Ինչպէս յայտնի է, Թիֆլիսի քաղաքային ուղղափայի անդամի պաշտօնի համար ընտրված էին երկու անձինք։ Թիֆլիսի նահանգապետը հաստատել է նրանցից Ն. Կոկչաեվին։

—

Շուտով կառավարութեան կողմից կը հրատարակվեն մանրամասն կանոններ ներքին խաղարկութեան տոմսերը մաս-մաս վճարով գնելու վերաբերմամբ։ Այն բանկային հաստատութիւնները, որոնք կատարում են այդ տեսակ վաճառքներ, կը պարտաւորեցնվեն երեւացող տեղերում կախել կանոնները եւ կատարել վաճառքը՝ համաձայն այդ կանոնների միայն։

—

Մոսկվայի լրագիրներին հաղորդում են Պետերբուրգից, թէ չը նայելով որ պոլիտեխնիկական ինստիտուտը բացված է միայն հինգ օր առաջ՝ բայց այդ հինգ օրվայ ընթացքում ստացված են ընդունելութեան խնդիրներ 415 հոգուց, որոնցից 155-ը ցանկութիւն են յայտնել մտնելու անտեսական բաժանմունքը, 141-ը—էլէքտրո-տեխնիքական բաժանմունքը, 62-ը—մեխանիկական բաժանմունքը եւ 57-ը—նաւաշինութեան բաժանմունքը։ Խնդիրների ընդունելութիւնը կը վերջանայ յունիսի 1-ին։

—

Երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստրութեան մէջ մշակված է մի օրինագիծ, որի նպատակն է թեթեւացնել հողատերերի համար անտառային պաշտպանութեան օրէնքի գործադրութիւնից առաջացած դժուարությունները եւ մի եւ նոյն ժամանակ նպաստել այն անտառների պաշտպանութեան գործին, որոնք պետական նշանակութիւն ունեն։

—

Կաղէտների կօրպուսներում,—մայրաքաղաքի լրագիրների ասելով,—մտադրութիւն կայ մրցնել լոլոլու արուեստի պարտաւորական դասեր։

—

Վլադիկավկազի երկաթուղու վարչութեան իրաւունք է տուած ձեռնամուխ լինել շինելու սեւծովեան երկաթուղին եւ տանել մի ճիւղ դէպի Մայկօպ։ Երկաթուղու շինութեան աշխատանքների գլխաւոր ղեկավար նշանակված է ինժեներ Պուշչինիկով, որ մի ժամանակ եղել է անդրկովկասեան երկաթուղու կառավարիչ։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Երէկ պարսից սահմանից եկող մասնաւոր մարդուց իմացանք, որ Շահթաղթից Խոյ տանող ճանապարհի վրա, ռուսաց սահմանին մօտ, Արապլար գիւղից 8 վերստ հեռաւորութեամբ, յունիսի 12-ին, քուրդ աւազակները յարձակվում են Արապլարից մեկնող կարաւանի վրա եւ մի կողմը տանելով բոլորին թալանում են։ Այդ անակնկալ լուրը կայծակի արագութեամբ հասնում է նոյն գծի վրա հսկող մաքսատան պաշտօնեայ Լեւոն Մնդոյեանցին։ Վերջինս նստելով ձի ընկնում է աւազակների ետեւից։ Այս բանից ոգեւորված Արապլար գիւղի թուրքերը հասնում են Լեւոնին եւ հաւաքական ուժով ընկնում քուրդերի ետեւից։ Մինչեւ թուրքերի հասնելը՝ Լեւոնը սպանած է լինում 2 քուրդ եւ 2 ձի։ Սկսվում է երկու կողմից էլ հրացանաձգութիւն. Լեւոնը, իր փոքրիկ խմբի գլուխն անցած, հերոսաբար կռւում է անհամեմատ մեծ ուժի դէմ եւ ընկնում է թշնամու գնդակից վիրաւորված ու 10 բոպէից յետոյ հոգին աւանդում։ Լեւոն Մնդոյեանցը մօտ 27 տարեկան երիտասարդ եւ բնիկ ախալցխացի էր, որը 97 թուին անցնում է Պարսկաստան եւ բնակութիւն հաստատում Սալմաստի Մահլամ գիւղում։ Լեւոնի դիակը հնարաւորութիւն չունենալով ռուսաց սահմանը անցկացնելու, թաղում են Ալաբլուր գիւղի ճանապարհի վրա երկու հայի եւ բազմաթիւ ողբացող թուրքերի ներկայութեամբ։»

—

ԿԱՂԶՈՒԱՆԻՑ մեզ գրում են. «Մօտ օրերումս այստեղ եկան դերասանուհի տ. Զարէլ եւ դերասան պ. Ամոն ու մի քանի օրով տեղիս հասարակական մեռած կեանքը շարժեցին իրանց տուած երկու ներկայացումով։ Առաջին անգամ սիրողների մասնակցութեամբ խաղացին «Թուղթ խաղացողի կեանքը», երկրորդ անգամ խաղացին «Եղբայր ու Քոյր» ողբերգութիւնը։ Սիրողներից լաւ խաղաց իր դերը միայն բժ. Գ. Կաճկաճեան, ինչպէս նաեւ «Թուղթ խաղացողի կեանքը» կոմէդիայի մէջ Վառնէրի դերում։ Շնորհակալութեան արժանի է օր. Ա. Բուդաղեան, որ արհամարելով գաւառական «ասէկօսները» մասնակցեց ներկայացման իր բեմ դուրս գալով եւ գործին աջող ելք տալով։»

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են։ «Դաշտային մասում հունձը կարելի է վերջացած համարել։ Ինչպէս դաշտային մասերում, նոյնպէս եւ սարահարթերում, առատ բերք է սպասվում, եւ դրա շնորհիւ մեծ յոյս կայ, որ հացահատիկի գները զգալի կերպով կիջնեն։ Երկու տարի է, որ մեր գաւառը, հացի պակասութեան պատճառով, անասելի նեղութիւն էր կրել. ռաչպար գիւղացին, ինքը գիւղից հաց արտահանելու փոխարէն, վերջին երկու թէ երեք տարիներում, շուկայից ինքը սպառողի—առնողի դերն է խաղացել։ Այգիներն էլ այս տարի առատ բերք են խոստանում. իրաւ, ցուրտը մի քանի մասերում փոքր չափով վնասներ պատճառեց, բայց ոչ այնքան զգալի չափով. եթէ մեր այգիներն ազատ մնան բնութեան միւս պատահարներից, այս տարի գինու բերքն էլ վատ չի լինի։ Իսկ միւս հիւանդութիւնների դէմ, ինչպէս «թոզ» կամ «միլդիուն» է, միջոցներ թէեւ ձեռք առնված են, բայց ոչ պարտաւորեցուցիչ կերպով, ոչ բոլորքեանը։ Պարզ բան է, հիւանդութիւնը այսպիսով արմատախիլ չի լինի։»

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Տիրայր վարդապետը վերադառնալով Էջմիածնից ստանձնեց իր պաշտօնը եւ, ինչպէս լսում ենք, այժմ գտնվում է Ալէքսանդրոպոլում ու պ. Կոստանեանցի հետ ուսուցիչների ընտրութիւն են անում առաջիկայ ուսումնական տարվայ իրանց ցանկացած ուսուցչական խումբը ունենալու Երեւանի թեմական դպրոցի եւ Գէորգեան ճեմարանի համար։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թէհրան, յունիսի 15-ին

Թաւրիզի հայերին համեմատելով Թէհրանի հայերի հետ, կը տեսնենք, որ առաջինները հսկայական քայլեր են անում՝ թէ կրթական գործում եւ թէ ուրիշ ազգային հասարակական խնդիրներում։ Նրանք կրթութեան եւ զարգացման անհրաժեշտ պահանջը հասկացել են, այն ինչ Թէհրանցիք դեռ շատ հեռու են այդ մտքից։ Սրանք թաղված են խոր քնի մէջ. Թէպէտ երբեմն պատահում են մարդիկ, որոնք փորձում են արթնացնել, բայց իզուր, որովհետեւ սթափվել չեն ցանկանում. այդ նինջը նրանց համար շատ քաղցր է, քանի որ հեռու է պահում իրանց՝ ընդհանրութեան շահերի մասին հոգալուց։

Թաւրիզը, բացի երկու կանոնաւոր տղայոց հինգդասեան եւ երկու օրիորդաց երեքդասեան դպրոցներ ունենալուց, մտածում է հիմնել եւ մի կենտրոնական դպրոց, մինչդեռ մենք ունենք ընդամենը տղայոց մի երկդասեան եւ օրիորդաց միդասեան դպրոց, ուր 300—325 տուն ունեցող հայերից՝ յաճախում են միայն 80—60 հոգի երկու սեռից միասին, որոնց տարիքը 5-ից մինչեւ 12 աւելի չէ անցնում. աշակերտը դեռ պարզ կարդալ չը սովորած, հայրը հանում է որդուն եւ յանձնում մի կօշկակարի, դերձակի կամ մի վաճառականի, որպէս զի փող աշխատի տան համար։

Դուք կը հարցնէք, ապա երիտասարդներն ինչ են անում, մինթէ ազգային խնդիրներով չեն հետաքրքրվում, որ դպրոցն այդպէս երեսի վրա է թողնված. ցաւօք սրտի պիտի ասեմ, որ Թէհրանի երիտասարդութիւնը մեռած վիճակի մէջ է, սրանց մեծագոյն մասի մէջ գործելու եռանդ չը կայ. Թէպէտ այդ հարցերով հետաքրքրվողներ էլ կան, բայց այնքան քիչ են, որ կարելի է մատի վրա հաշուել, սակայն սրանց վրա էլ ուշադրութիւն դարձնողներ չը կան. նրանց ձայնը՝ որպէս արձագանք տարածվում է անհուն մթնոլորտի մէջ, առանց հեռը թողնելու, թէկուզ որչափ էլ արդարացի լինեն պահանջները, դարձեալ կը մնան անկատար, որովհետեւ լսողներ չը կան, բայց մարեցնող եւ հալածողներ շատ կան։

Այս տարի «Հայկազեան» երկսեռ դպրոցի աշակերտները հրապարակական քննութիւններ չունեցան, այլ դասարանական հարցաքննութիւններ. Թէհրանցիների համար սա նորութիւն էր, բայց իրարանցում չը պատճառեց ժողովրդին, որովհետեւ եթէ քննութիւն էլ լինէր, ոչ ոք ներկայ չէր լինի։ Բայց եթէ աշակերտներից մէկը ծուլութեան պատճառով մնայ մի եւ նոյն դասարանում, անմիջապէս կը սկսեն խեղճ ուսուցիչներին զրպարտել եւ բամբասել՝ թէ կողմնապահութիւն են արել՝ առանց իմանալու իրանց որդիքն ամբողջ տարվայ մէջ ինչ յառաջադիմութիւն են ցոյց տուել։ Հոգաբարձուները ժողովրդից աւելի անտարբեր են դէպի դպրոցը. ամբողջ ուսումնական տարեշրջանում ոչ մէկը դպրոցի դռնից ներս չէ մտել, դասերին ներկայ չէ եղել ստուգելու՝ իրաք ուսուցիչները պարապում են, թէ խաղում. սրան աւելացրէք եւ այն, որ տարվայ մէջ հազիւ երեք կամ չորս հոգաբարձական ու մանկավարժական ժողովներ են լինում եւ դուք կը տեսնէք, որ իրաք Թէհրանում ամեն ինչ լոկ անուանական է, գործնական ոչինչ չը կայ։ Հոգաբարձուներին էլ մեղադրել չենք կարող, որովհետեւ ընտրվել են առանց իրանց բարեհաճ կամքի, մինչեւ իսկ քուէ ստացողները ընտրութեան ժամանակ ներկայ չեն եղել։ Մի դէպք միայն մխիթարական է, որ այս տարի ուսուցչական խումբն անփոփոխ մնաց, մի բան որ Թէհրանում շատ հազւագիւտ է, նամանաւանդ վերջին տարիներս։ Բայց փոփոխութեան պատճառն ինչ էր. այդ արդէն ամենքին յայտնի է. պատճառը դպրոցական երկպառակութիւններն ու խռովութիւնները, ուսուցիչների միմեանց հետ ունեցած տեղութիւնն ու նախանձն էր։ Իսկ այս տարի ուսուցիչներն ազատ էին այդ աղէտներից ու ընդհարումներից, որովհետեւ խռովութիւնների պատճառ եւ չար որոմներ սերմանող մի ուսուցիչ արդէն անցեալ տարվայ կիսից արտաքսված էր դպրոցից։

Ս. Պետրոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Վերջին տեղեկութիւնների համեմատ, ժանտախտից մեռել են Հնդկաստանում ապրիլի 26-ից մինչեւ մայիսի 23-ը 28,304 մարդ։ Չինաստանում, Հանկօնգում, մայիսի 16-ից մինչեւ յունիսի 12-ը մեռել են 192 մարդ։ Նապօլիայում, Ֆօրմօզա կղզու վրա, մայիսի 5-ից մինչեւ մայիսի 26-ը ժանտախտով հիւանդացել են 452 մարդ։ Նրանցից 360 դէպքերում հիւանդութիւնը վերջացել է մահով։

—Լօնդօնից հեռագրում են յունիսի 19-ից, որ շաբաթ օրը ձրի ճաշ կը տրվի Լօնդօնի կէս միլիօն չքաւորների համար։ Ճաշը կը սարքվի 279 վրաններում։

—Գերմանական եւ լեհական լրագիրները հաղորդում են, որ Վիլհէլմ կայսրը ներկայումս եռանդով ուսումնասիրում է պաշտօնական նիւթեր լեհական հարցի վերաբերութեամբ, պատրաստելով մի ճառ, որ նա դիտաւորութիւն ունի արտասանել Պոզնանում, գերմանական պատմական թանգարանի նոր շինութիւնը օրհնելու առիթով։

—Աւղանական էմիր Խաբիբուլլայի մասին «Մէյտէրի գործակալութեանը» Պէշավէրից հեռագրում են յունիսի 13-ից. «Տեղեկութիւն է ստացված, որ աւղանական էմիրը 25 օր առաջ պակվեց աւղանական հինգ իշխանների աղջիկների հետ։ Ռուսաց նահանգապետը Տաշկէնտում թոյլատրութիւն խնդրեց էմիրից պաշտօնական ներկայացուցիչ ունենալու մասին Քաբուլում։ Էմիրը բարեհաճ է վերաբերվում այդ միջնորդութեան, բայց Բիբի-Խալիմը, Մահմէդ-Ումարխասի մայրը եւ հանգուցեալ էմիր Աբդուրահմանի այրին թշնամաբար է վերաբերվում դրան։ եւ համապատասխան ներշնչումներ է անում էմիրին։»

—Ֆրանսիայում կրկին ագիտացիա է սկսվել ի նպաստ մահվան պատժի վերացման։ Ֆրանսիական բանւորական բիրժաների դաշնակցութիւնը այս օրերս Պարիզում մի միտինգ կազմեց, ուր Հէնրիէտա Մէյէր մի ճառ արտասանեց, պնդելով մանաւանդ այն բանի վրա, որ մահվան պատիժը ջնջվի զինւորական օրէնքներից։ Այդ միտինգին պէտք է նախագահէր Անատոլ Ֆրանս, բայց նա չէր եկել հիւանդութեան պատճառով եւ ուղարկել էր մի նամակ, որ ամբողջապէս տպված է «Aurore» լրագրում, ուր, ի միջի այլոց, ասում է. «Իրաւաբանական սպանութեան սովորութիւնը անցաւ մեզ մօտ հին ժամանակներից, նա թէոկրատական ծագում ունի եւ պահպանվել է, որպէս նախկին բարբարոսութեան մնացորդ։ Ամօթ է Ֆրանսիայի համար, որ նրա մէջ դեռ գոյութիւն ունի մահվան պատիժը, որը վերացված է արդէն եւրոպական շատ պետութիւններում։ Անհրաժեշտ է վերացնել դրան։ Ինչ վերաբերում է զինւորական օրէնքին, որը մահով է պատժում շատ հասարակ յանցանքներ, նոյնպէս պէտք է վերացնել։ Զօրքը նոյնպէս վարչութեան մի ճիւղ է, ինչպէս եւ երկրագործութիւնը, ֆինանսները կամ ժողովրդական ուսուցումը, եւ դրա համար չը պէտք է լինեն առանձին դատարաններ։ Ինչպէս չը կան ֆինանսական կամ համալսարանական դատարաններ։ Իւրաքանչիւր առանձնակի դատարանը հակասում է ժամանակակից իրաւունքի հիմքերին։ Զինւորական դատարանները մեր սերունդներին կերեւան նոյնպէս հնացած հիմնարկութիւններ, ինչպէս մեզ ֆէոդալական եւ եկեղեցական դատարանները։ Ժողովը միաձայն որոշեց խնդրագիր ներկայացնել մահվան պատիժը վերացնելու մասին, իսկ Անատոլ Ֆրանս տեղեկացրեց, որ կը ստորագրէ այդ խնդրագիրը։ Ներկայ կառավարութեան անդամների մէջ քիչ չեն մահվան պատժի հակառակորդներ, եւ պէտք է կարծել, որ այդ խնդրագիրը անհետեւանք չի մնայ։

—Գերմանական մամուլը ուրախութեամբ ողջունում է երեքպետեան դաշնակցութեան վերանորոգումը։ Ամենամեծ ջանքը, որ գործ է դրված դաշնակցութեան վերանորոգման համար, լրագիրները վերագրում են կոմս Բիւլովին, բայց արժանի յարգանքը մատուցանում են նաեւ կոմս Գոլուխովսկուն եւ Պրինչիպին, ինչպէս նաեւ Բերլինի աւստրիական եւ իտալական դեսպաններ Սեչենիին եւ կոմս Լանցային։ «Vos. Zeitung» լրագիրը անուանում է այդ դաշնակցութիւնը «ապահովագրական մի ընկերութիւն խաղաղութեան խախտման դէմ»։ «Berlin. Neust. Nachr.» ասում է, թէ իր գոյութեան 23 տարվայ ընթացքում երեքպետեան դաշնակցութիւնը ոչ միայն չէ վնասել ոչ ոքի, այլ եւ շատ անգամ կրիտիքական րոպէներում ազատել է Եւրոպան կործանիչ պատերազմներից։ Գերմանական լրագիրները նկատում են, որ երեքպետեան դաշնակցութեան վերանորոգումը զլուխ եկաւ ոչ առանց դժուարութիւններ։ Կոմս Բիւլով ստիպված էր շատ աշխատել՝ մանաւանդ այն բանի համար, որ հաշտեցնէ Աւստրիայի եւ Իտալիայի յայտնի հակառակ շահերը միմեանց հետ։ «Post» անուանում է կոմս Բիւլովին Բիսմարկի արժանաւոր աշակերտ եւ ասում է, թէ նա արժանի է գերմանական ամբողջ ազգի շնորհակալութեան։ Այս կարծիքների հակառակ՝ «Vorwärts» սոցիալիստական լրագիրը յայտնում է, որ երեքպետեան դաշնակցութեան վերանորոգումը ինքն ըստ ինքեան մի նշանաւոր փաստ չէ, որովհետեւ նա չէ փոխում սպառազինված խաղաղութեան պայմանները, որոնցից այնքան տանջվում է Եւրոպան։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

26 յունիսի

ՀԷԼՍԻՆԳՖՈՐՍ։ Տեղի ունեցաւ բնագէտների եւ բժիշկների համաժողովի երկրորդ ընդհանուր նիստը։ Զեկուցումներ կարդացին դանիական պրոֆէսոր Տիլէ, Հէլսինգֆորսի պրոֆէսոր Տիդէրստէդ եւ նորվէգիացի Իօհանէս։ Վերջնական հաշուով Ռուսաստանից մասնակցում են 735 հոգի, որոնց թուում Ֆինլանդիայից—535. Դանիայից—53, Նորվէգիայից—156 եւ Շվէցիայից—200 հոգի.

ՏԱՄԲՕՎ։ Յունիսի առաջին կէսում Տամբովի գաւառում կարկուտը եւ հեղեղները վնասել են հացահատիկների 5,136 դեսեատին ցանքեր՝ աւելի քան 217,000 ռուբլու արժողութեամբ։

ԼՕՆԴՕՆ։ Թագաւորի առողջութեան բարո-

քումը չարունակվում է։ Թագաւորը լաւ է քնում. ոյժերը վերականգնվում են. վէրքը լաւանում է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գերմանական կայսրի Վիրօրգեան գունդը կատարեց այսօր իր տօնը։ Եկեղեցական զօրահանդէսին ներկայ էին գերմանական դեսպանը եւ դեսպանութեան պաշտօնեաները։ Դեսպանը բաժակ առաջարկեց գնդի բարգաւաճման համար։

ՀՌՕՄ։ Վիկտօր-Էմմանուէլ թագաւորը կուղեւորվի Պետերբուրգ Վերօնայի, Ինսպրուկի, Միւնխէնի, Հալլէի, Պօզնանի եւ Գումբինէնի վրայով։

27 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Правительственный Вѣстникъ»-ում տպագրված է Բարձրագոյն հրաման դրօշմաթղթերի տուրքին վերաբերեալ կանոնադրութեան մի քանի որոշումները փոփոխելու եւ լրացնելու մասին։

ՊՕՐՏ-ԱՐԹՈՒՐ։ Նախիմովի ծննդեան հարիւրամեակի տօնի առիթով՝ զինուորական «Варягъ» շրջանաւի վրա կատարվեց հոգեհանգիստ եւ տեղի ունեցաւ նախաճաշ զինուորական եւ քաղաքացիական իշխանաւորների համար, որին ներկայ էր Ֆրանսիական բրիգադայի գլխաւորը Զինաւանում—գեներալ Սօսիլոն. ապա տեղի ունեցաւ նաւարշաւ։

ՍԱԼՕՆԻԿ։ Շաբաթ օրվանից սկսած նկատվում են երկրի ցնցումներ, բայց այժմ այդ ցնցումները աւելի թոյլ են։ Բնակիչները վերադարձան։ Մի տան կործանումից սպանվեցին երկու երեխաներ։

ԼՕՆԴՕՆ։ Առաւօտեան Զեմբէրլէն դուրս եկաւ հիւանդանոցից եւ տուն գնաց՝ կնոջ ուղեկցութեամբ. նրա գլուխը բաց էր եւ կրում էր վիրակապ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշուով, փակագծում Թիֆլիսի հաշուով)

Արագ գնացք Թիֆլիսից—Բագու շաբաթը մէկ անգամ ուրբաթ օրերը դուրս է գալիս առաւօտեան 10 ժամ 15 րոպ. (11 ժ. 49 ր.), հասնում է Բագու գիշերվայ 12 ժամ 11 ր. (1 ժ. 9 րոպէին)։

Արագ գնացք Բագուից—Թիֆլիս դուրս է գալիս ուրբաթ օրերը գիշերվայ 12 ժամ 52 րոպէ (1 ժ. 50 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 2 ժ. 45 ր. (3 ժ. 43 ր.)։

Արագ գնացք Թիֆլիսից—Բաթում ամեն օր դուրս է գալիս առաւօտեան 6 ժ. 45 ր. (7 ժ. 43 ր.) հասնում է Բաթում երեկոյեան 5 ժ. 2 ր. (6 ժ.)։

Արագ գնացք Բաթումից—Թիֆլիս ամեն օր դուրս է գալիս երեկոյեան 10 ժ. 10 ր. (11 ժ. 8 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 9 ժ. 4 ր. (10 ժ. 2 ր.)։

Փոստատար գնացք Բագուից դուրս է գալիս երեկոյեան 9 ժ. 22 ր. (10 ժ. 20 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 3 ժ. 56 ր. (4 ժ. 54 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 5 ժ. 9 ր. (6 ժ. 7 ր.), հասնում է Բաթում առաւօտեան 5 ժ. 40 ր. (6 ժամ 38 րոպէին)։

Մարդատար գնացքը Բագուից դուրս է գալիս ցերեկվայ 2 ժ. 27 ր. (3 ժ. 25 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 7 ժ. 39 ր. (8 ժ. 37 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից առաւօտեան 8 ժ. 29 ր. (9 ժ. 27 ր.), հասնում է Բաթում երեկոյեան 8 ժ. 30 ր. (9 ժ. 28 ր.)։

Փոստատար գնացքը Բաթումից դուրս է գալիս գիշերվայ 11 ժ. 5 ր. (12 ժ. 3 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 11 ժ. 34 ր. (12 ժ. 32 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից ցերեկվայ 12 ժ. 36 ր. (1 ժ. 34 ր.), հասնում է Բագու առաւօտեան 6 ժ. 16 ր. (7 ժ. 14 ր.)։

Մարդատար գնացք Բաթումից դուրս է գալիս առաւօտեան 7 ժ. 5 ր. (8 ժ. 3 ր.), հասնում է Թիֆլիս երեկոյեան 6 ժ. 39 ր. (7 ժ. 37 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 7 ժ. 24 ր. (8 ժ. 22 ր.), հասնում է Բագու ցերեկվայ 12 ժ. 5 ր. (1 ժ. 3 ր.)։

Փոստատար գնացք դուրս է գալիս Թիֆլիսից դէպի Կարս երեկոյեան 8 ժ. 30 ր. (9 ժ. 28 ր.). հասնում է Սանահին 1 ժ. 35 ր. (2 ժ. 33 ր.), Ղարաքիլիսա գիշերվայ 3 ժ. 32 ր. (4 ժ. 30 ր.), Ալէքսանդրոպոլ առաւօտեան 7 ժ. 17 ր. (8 ժ. 15 ր.), Կարս ցերեկվայ 11 ժ. 1. (11 ժ. 59)։

Փոստատար գնացք Կարսից դուրս է գալիս ցերեկվայ 4 ժ. 57 ր. (5 ժ. 55 ր.), հասնում է Ալէքսանդրոպոլ երեկոյեան 8 ժ. 5 ր. (9 ժ. 3 ր.), Ղարաքիլիսա 11 ժ. 42 ր. (12 ժ. 40 ր.), Թիֆլիս առաւօտեան 6 ժ. 20 ր. (7 ժ. 18 ր.)։

Խառն գնացք Թիֆլիսից դուրս է գալիս ցերեկվայ 2 ժ. 15 ր. (3 ժ. 13 ր.), հասնում է Ղարաքիլիսա 9 ժ. 30 ր. (10 ժ. 28 ր.) Ալէքսանդրոպոլ գիշերվայ 1 ժ. 25 ր. (2 ժ. 23 ր.)։

Խառն գնացք Ալէքսանդրոպոլից դուրս է գալիս առաւօտեան 5 ժ. 25 ր. (6 ժ. 23 ր.), հասնում է Ղարաքիլիսա առաւօտեան 8 ժ. 35 ր. (9 ժ. 33 ր.) և Թիֆլիս ցերեկվայ 3 ժ. 37 ր. (4 ժ. 35 րոպէին)։

Լոյս տեսաւ
ԵՐԳԻՉ ԳՐԻԳՈՐ ՏԱԼԻԵԱՆՑԻ
„ՔՆԱՐԸ“
վերնագրով երգարանը
ԳԻՆՆ Է 25 ԿՈՊ.
Դիմել՝—Ալէքսանդրոպոլ, Ալէքս. Մխիթարեանցի գրավաճառանոցը, կամ—հեղինակին։
5—8

ԴԻԼԻՋԱՆՈՒՄ
ԵՐԿՈՒ ՍԵՆԵԱԿԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ
ԱՄԱՐԱՆՈՑ
Իր կահ կարասիքով
Վարձու է տրվում 100 ռուբլիով։ Դիմել՝
Делижанъ Сергѣю Теръ-Погосянцъ.
2—3

ՀԱԶԻԱԳԻՒՏ ԴԻՊՔ
Որովհետեւ եկեղեցական մոմավաճառութեան կապալը անցնում է ուրիշի ձեռք, ուստի կը ծախվեն հասարակութեան՝ եկեղեցական մեղրամոմեր, հայկական կնիքով, մինչեւ յունիսի 30-ը, հետեւեալ գներով.—սպիտակ մոմերը, որոնց ֆունտը արժէր 1 ր. 25 կ., կը ծախվեն 1 ռուբլով, դեղին մոմերի ֆունտը 1 ռուբլու տեղ—80 կոպէկով։ Վաճառումը տեղի կունենայ Նորաշէնի եկեղեցուն կից խանութում, V քաղաքամասում, տէլէֆոն № 836 2—3

Պետերբուրգի Օբուխովսկի հիւանդանոցի օրդինատոր
ԲԺԻՇԿ
Մ. Ի. ՄԷԼԻՔ-ԲԱԲԱԽԱՆԵԱՆՑ
ընդունում է ներքին, կանանց (գինեկոլոգիական մասամբ) եւ ջղային հիւանդների. ամենայն օր, ժամի 11-ից—1 առաւօտեան, 5—7 երեկոյեան
Հասցէն՝ Գոլովինսկի պրոսպէկտ, տ. № 39, Պոնդուելի, Մեսիկոլոպոլի դեղատան մօտ։

Լոյս տեսաւ
ԼԷՕ
ՑՈՎՍԷՓ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՐՂՈՒԹԵԱՆ
Կենսագրական-պատմական տեսութիւն
Զորս պատկերով (Ցովսէփ կաթ. Արղութեան, Կայսրուհի Եկատերինա II, իշխան Գ. Պոտեմկին, կոմս Ցովհաննէս Լազարեան)։
ԳԻՆՆ Է 60 ԿՈՊԷԿ
Ծախվում է «Մշակի» խմբագրատանը։ Հասցէն. Тифлисъ, редакція газ. «Мшакъ».

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐԱՄԻՋՈՑ
մաշերը բուսցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց
ԶՈՒԻ ԿԱԹԸ
երեսին քնքշութիւն եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մունները, տալիս է կաշուին քնքշութիւն եւ սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական եւ դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը դտնվում է Պետերբուրգում, Գուչկինեան փողոց, տ. № 15, բընակարան № 2. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում՝ Կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բագուում. նաեւ. Միքայէլեան կամուրջի վրա, Պոպովի եւ Աբրիսակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս պօստով։ 98—100

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ
վաճառվում են հետեւեալ թատրօնական պիէսները՝
«Վաղիստան, Հայաստան եւ Քիւրդիստան», թարգմ. Միաբան—50 կ.
«Զանազանութիւն հինգ դարուց», Մ. եպիսկոպոս Տէրունեանի, 3 հատոր—2 ր. 80 կ.
«Փշրանք», մի պատկեր գարնանային կեանքից, Կ. Մէլիք-Շահնազարեանի—15 կ.
«Ուղեցոյց գործնական գինեգործութեան եւ շերամապահութեան», Կ. Մէլիք-Շահնազ.—1 ր.
«Զուռնաչի Խաչան», գրեց Տմբլաչի Խաչան, 2 հատոր—80 կ.
«Ռուսական Հայաստան կամ Արաքսի աւազանը. Ուրմիա լիճ եւ առաջաւոր Ասիա», թարգմ. Միաբան—30 կ.
«Նիկոլ եպիսկոպոս եւ պատմութիւն դարձին Հայկազանց Լեհաստանի ի կաթոլիկութիւն», Ս. եպիսկ. Այվազեանի—30 կ.
«Դեօլինգերի նամակները եւ յայտարարութիւնները Վատիկանի հրովարտակների մասին», 1861—50 կ.
«Բաղդատական քերականութեան ծագումը եւ օգուտները», Դաւիթ-բէկի—50 կ.
«Արշալոյս քրիստոնէութեան հայոց», հ. Ղ. Ալիշանի—1 ր.
«Ինչպէս տերեւները», Ցովսէփ Ճեագոզայի (Վենետիկ)—75 կ.
«Աստուածային կատակերգութիւն», թարգմ. հայր Ղազիկեան (Վենետիկ) 1 ր. 25 կ.
«Գրպանի Ատլաս», հայր Էփրիկեանի (Վենետիկ) նոր տպագրված, կազմով—1 ր. 75 կ.
«Երկրագործութեան անհրաժեշտ գիտելիքներ», Գ. Ղազարեանի—90 կ.
«Ցիշատակարան աղէտից Գրիգոր Խալաթեցւոյ, պատմական վիպասանութիւն—15 կ.
«Աւետարանը պատմութեան մէջ», թարգմ. Ա. Տէր-Ցակոբեան—20 կ.
«Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ», Աբէլ եպիսկոպոսի—40 կ.
«Ցիսուս Քրիստոսի երկրաւոր կեանքը եւ վարդապետութիւնը», Տ. քահ. Մարաղեանի—1 ր.
Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ «ГУТТЕНБЕРГЪ». Г. Галустяну, Лорисъ-Меликовская ул. № 11. 1—3

Այս տարվայ Սեպտեմբերից բացվում է Օդեսայում
ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ԱՏԱՄՆԱԲՈՑԺ ՄԱՐԿՕՎԻՉ
Դիմել տեղեկութիւնների համար.—Սադովայա փող. № 15-
5—10

ԾՂԹԱՑ
Նաւթարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը յայտարարում է ի գիտութիւն պ. բաժնետէրերի, որ սոյն յունիսի 19-ից մինչ 28-ը ներփակված եւ յունիսի 29-ից մինչ յուլիս ներփակված տուգանքով նշանակված է 5% վճար, այսինքն իւրաքանչիւր փային հինգ ռուբլի։ Վճարի ժամանակ պէտք է ներկայացնել բաժնետոմսերը։
Վճարները ընդունվում են 10-ից մինչեւ 2-ը եւ 7-ից մինչեւ 9 ժամը երեկոյեան։
(20, 26, 28, յուն. եւ 1, 5, ուլ.) 4—5

Տպագրվում է եւ մինչեւ յուլիսի վերջը լոյս կը տեսնէ
ԼԷՕ
ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑ
Մանրամասն կենսագրութիւն, լուսաբանված գրական-պատմական տեսութիւններով.
Երկուհատոր, մօտ 650 երես, բազմաթիւ (25-ից աւելի) պատկերներով (Նազարեանց եւ նրա մանակակիցները, „Հիւսիսափայլի“ գլխաւոր աշխատակիցները, Նազարեանցի ֆակսիմիլէն, գերեզմանը, „Սիսափայլի“ խմբագրատունը)։
Մինչեւ տպագրութեան վերջանալը բացվում է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ։
Բաժանորդագինն է 1 ՐՈՒԲԼԻ, իսկ ճանապարհածախսով 1 ՐՈՒԲԼԻ 35 ԿՈՊԷԿ։
Լոյս տեսնելուց յետոյ գինը կը բարձրացնվի։
Հատորները առանձին չեն ծախվի։ Առաջին հատորը, լոյս տեսնելուց, կուղարկվի բաժանորդներին եւ վաճառքի չի հանվի մինչեւ երկրորդ հատորի լոյս տեսնելը։
Վերադիր վճարով բաժանորդագրութիւն չէ ընդունվում։
Բաժանորդագրութիւնը ԹԻՖԼԻՍՈՒՄ ընդունվում է «Մշակի» խմբագրատանը եւ «Գուտենբէրգ» գրավաճառանոցներում։ ԲԱԳԻՈՒՄ առանց ճանապարհածախսի բաժանորդագրութիւն ընդունվում է Սամսոն Ցարութիւնեանի գրավաճառանոցում։ Միւս քաղաքներից դիմում են
Тифлисъ. Редакція „Мшакъ“. 4—10

Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցում
վաճառվում են՝
ԱՐԾՐՈՒՆԻ Վ. բժ., Թոքախտ կամ բարակ ցաւ—պատկերազարդ—Թիֆլիս, 1902 թ. գ. 10 կ.
« Ինֆլուէնցիա կամ նոր ցաւ, Թիֆլիս, 1902 թ. գ. 3 կ., նոյնպէս բժշկի միւս գրքերը։
ԲՈՒԴՈՒՂԵԱՆ Ա. բժ., Ինչ է կաշու հիւանդութիւնը, 1 պատկերով, Պետերբուրգ, 1902 թ. գ. 15 կ., նոյնպէս եւ միւս գրքերը։
ԵՍԱՑԵԱՆ Ց., Խորտակված սէր, վէպիկ, Թիֆլիս, 1902 թ. գ. 30 կ.
ԵՐԵՄԵԱՆ Հ. Ս., Կենսագրութիւն հայր Ղ. Ալիշանի, պատկերազարդ, Վենետիկ, 1802 թ. գ. 1 ր. 50 կ.
ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ Գ., գերմ. թարգմ., Ֆաուստ, Գէօթէի, հեղինակի պատկերով եւ կարեւոր ծանօթութիւններով, մաքուր տիպ, Թիֆլ. 1902 թ. գ. 2 ր.
ДАГБАШЬЯНЪ А., Полный Русско-Армянскій словарь, вып. I, Тифл. 1992 г. ц. 1 р.
Դիմել՝ Тифлисъ, въ Центральную книжную торговлю. (ո.) 5—5

„Փ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ“
ԿՕՆՖԷՏԻ ԵՒ ՇՕԿՕԼԱԴԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ
Կովկասեան գիւղատնտեսական ցուցահանդէսում մեր պատրաստած ապրանքները ալ ստացան
Կովկասում կոնֆէտի արդիւնաբերութեան
ՄԻԱԿ ՄԵԾ ԱՐԾԱԹԵԱՅ ՄԵԴԱԼԻ
Առանձնապէս յանձնարարում ենք. ՌԱՀԱԹ-ԼՈԽՈՒՄ, կարամէլ «ԻԲԻԼԻՃՆԱՑԱ» եւ առհասարակ բարձր յատկութեան կարամէլներ մրգեղէնով։
Գործարանում աշխատում են մայրաքաղաքի նշանաւոր վարպետներ։
Պատուէրներով դիմել. Թիֆլիս, Պավլովսկայա փողոց, սեփական տուն
Գործարանի հեռախօս № 362, գործարանական խանութինը № 772։
57—100 (հ. կ.)

Дозволено Цензурою, Тифлисъ, 27 Іюня 1902 г.
Электропечатня Груз. Издат. Т—ва, Б.-Ванкская ул.